ԱՒՕՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԱՋՈՒՅՑ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1872

digitised by A.R.A.R.@



ԱՐՕՏ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 4·

ԱՄԱԱԳԻՐ

ԱՊՐԻԼ 30·
1872·

ԱՕԳՈՒՑԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԹՈՒՂԹ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՑ

ԱՌ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԻԿՏՈՐԻՍ ԹԱԳՈՒՀԻ

ՄԻԱՑԵԱԼ ՏԵՐՈՒԹԵԱՆՆ ԱՆԳԴԻՈՑ

ՀԱՊԵՀՍՏԱՆԻ Լուրկամեայ Պանդխտութեան Պատմութիւնն տպագրուած լինելով յանուն Օգոստափառ Թագուհւոյն Անգլիոյ, ըստ իւր արքայական հաճութեան, Ս. Աթոռոյս Մենա. Պատրիարքն քաղցր պարտք համարեց շնորհակալութեան յատուկ թղթեր գրել առ Օգոստափառ Թագուհին և առ արտաքին գործոց Վսեմ. Պաշտօնեայն Կոմս Կրանվիլ, և յիշեալ պատմութեան քանի մի շքեղակազմ օրինակներով հանդերձ յանձնել քաղաքիս անգղիական Վսեմ. Հիւպատոսին առ 'ի հասուցանել ըստ պատշաճի որոց հարկն է։

Ուր Օգոստափառ Թագուհին ուղղեալ թղթոյն օրինակը այժմ տպագրելով Մեղրիս մէջ, կը խոստանամք, յետ ընդունելութեան պատասխանւոյն, զայն ևս հրատարակել 'ի գիտութիւն մեր ազգայնոց հայրենեաց։

digitised by A.R.A.R.@

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՅՐԱՑ ՏԷՐ ԵՐԱՑԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՀՆՈՐՀԻՒ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՌԱՔԵ ԼԱԿԱՆ ՍՍԻՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՍՈՒՐԲ ԵՒ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ, յորմէ հասցէ շնորհք և օրհնութիւն 'ի վերայ Վեհափառ ՎԻԿՏՈՐԻԱ Թագուհւոյ Միացեալ Թագաւորութեան Անգղիոյ, Թագաժառանգ Որդւոյ և համօրէն Տէրութեան Ձեր. կալ մնալ միշտ 'ի բարեբաստութեան՝ զօրացեալ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։

Որպէս զի յաջորդ սերունդն իմանայ թէ որչափ փառք ու պարծանք է Հայոց Ազգին համար, որ կարողացաւ կարեւոր ծառայութիւն մատուցանելով՝ համակրութեան ապացոյց մի ընծայել այն մեծ և հզօր Երկրին, որոյ գայսոնն կը կրէ ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ, փափագեցայ գրել տալ, 'ի ձեռն Գերապատիւ Եղբօր մերոյ 'ի Յիսուս Քրիստոս՝ Խահակայ Եպիսկոպոսի, այն պատգամաւորութեան պատմութիւնն, որով պատգամաւորեցաւ նա 'ի Հապէշստան 'ի 1867 ամի, Թէոդորոս Թագաւորի մօտ բանտարկուած Անգղիացիներու ազատութեան համար, որ է ճշմարտապատում և ցաւալի վէպ վշտակրութեանց և վտանգաց։

Երանի՜ թէ սոյն երկասիրութիւնն, որոյ ընծայումն հաճեցաւ ընդունել ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ, կարող լինէր շնորհ գտնել Ձեր առջեւ և յիշեցնել ու հաւաստել Ձեզ այն անձնանուիրութիւնը, զոր ունի առ Ձեզ համօրէն Ազգն Հայոց, որ և իւր խոնարհ հոլովին հետ միասին կ'աղօթէ առ Աստուած օրհնել ամենաշնիւ Թագուհին ՎԻԿՏՈՐԻԱ, Գերդաստանն իւր Թագաւորական և զՏէրութիւն իւր բովանդակ։

ՁԵՐՈՒՄ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Երուսաղէմ 'ի 15\3 Մարտի 1872

Ամենախոնարհ և անձնանուէր
Եպիսկ
Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի։

digitised by A.R.A.R.@

A SA MAJESTÉ VICTORIA

REINE DU ROYAUME-UNI D'ANGLETERRE

AUGUSTE SOUVERAINE!

AFIN que la postérité sache combien la Nation Arménienne est fière et heureuse d'avoir pu donner au grand et puissant pays dont VOTRE MAJESTÉ tient le sceptre, une preuve de sa sympathie, en lui rendant un important service; j'ai fait écrire par mon Révérend Frère en Jésus-Christ, l'Evêque Isaac, l'histoire de sa mission en Abyssinie, en l'an 1867, dans l'intérêt des prisonniers Anglais détenus chez le roi Théodore, véritable et douloureux récit de souffrances et de dangers.

Puisse cet ouvrage, dont VOTRE MAJESTÉ a daigné accepter la Dédicace, trouver grâce auprès d'ELLE, et LUI rappeler le dévouement de la Nation Arménienne qui, toute entière prie comme moi, son pasteur, le Dieu Tout-Puissant pour qu'il daigne bénir la noble REINE VICTORIA, de même que son Illustre famille et tout son grand royaume!

DE VOTRE MAJESTÉ

Jérusalem, le 15. Mars 1872

le très humble et dévoué
Isaïe
Patriarche Arménien de Jérusalem.

digitised by A.R.A.R.@

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

Անցեալ 6ին և 8ին դպրոցական երկու Հանդէսներ կատարուեցան 'ի Մխիթարեանս Ուխտաւորաց։ Առաջինն էր Յառաջդիմաց Վարժարանի Հանդէսն, յորում զանազան նիւթոց վրայ զանազան ճառեր կարդացուեցան, Հայերէն, Դասղիարէն, Տաճկերէն, և մի տրամախօսական աբարուած կատարուեցաւ ընդդէմ անտեղութեանց կրօնափոխութեանցուբ բաց 'ի բազմախուռն Ուխտաւորներէն և վանուցս Միաբանութենէն, ներկայ էր նաեւ քաղաքիս Վ. սեմ. Կառավարիչն իւր պաշտօնեաներով հանդերձ։ Իսկ երկրորդն էր քաղաքիս Հայ Օրիորդաց Դպրոցի ձեռագործաց վիճակահանութեան Հանդէսն։

Ձրկամելով մանրամասնաբար նկարագրել յիշեալ դպրոցական Հանդէսներն և մեր կողմէն գովեստներ կարդալ՝ արժանի կը համարիմ կարդացուած ճառերէն առ այժմ դէթ մին հրատարակել, զոր խօսեցաւ Յառաջդաւորաց Վարժարանի Դասատու Խարեշնորհ Սարկաւագ Մելքոն Թըրակացի։

ԱՌԱՔԵԼԱՊԱՇՏՕՆ Ս. ՀԱՅՐ ԵՒ ՄԵԾԱՐՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Մէն մի համախմբութիւն իւր յատուկ շարժաւիթն ու յատկանիշն ունի. ուստի բնական է որ մեր այս համախմբութիւնն եւս իւր յատուկ նպատակն ու նշանաբանն ունենայ։ Մեծ նպատակ պէտք է ունենայ սոյն համախմբութիւնը մեղնման փոթորկալից քամիներով 'ի սիրուս աշխարհի ցրուած ազգի համար։ Այո, մեծ է սոյն համախմբութեան էական շարժաւիթն ու իսկական նպատակն, որ է աշխարհի ամեն կողմէն Դաղդոնթայի ոգեւորիչ սարաւանդին և Փրկչի կենսատու Դերեզմանին այցելու Հայկազն ուխտաւորներն 'ի մի ժողովել և դասաւորակարութեան ու կրթութեան կարեւորութիւնը պարզել ամենուն համար։ Հայութեան վառարանդի անդամներն սուրբ Միծնի արտեւանաց վրայ գումարել և յօդաւորել 'ի մի մարմին, մի սիրտ և մի հոգի, քրիստոնէական դաստիարակութեան հուրն ու ջերմութիւնն ամենուն մէջ արծարծել, մտաւոր կրթութեան կենդանարար աշխոյժն ու եռանդն բացայայտել, մահահրաւէր թմրութենէ 'ի զգաստութիւն հրաւիրել, վերջապէս ծնողական անհրաժեշտ պարտուց կատարումն քարոզել՝ հալածումն տգիտութեան և տարապայման կարեւորութիւն ազգային դպրոցաց. ահա այս է գլխաւոր նպատակ ներկայ հանդիսիս։

Պէտք է որ վարժարանիս հանդիսադիր սանունք Ձեզ ծնողացդ՝ հարց և մայց պարտականութեան յուշարարներ լինին. պէտք է որ նոցա ներկայութիւնը ձեր մէջ ծնողական պարտուց բարի զգացումը զարթուցանէ, նոր ու զօրաւոր թռիչ մը տայ անոր և մղէ 'ի գործունէութիւն։

Ծնողական պարտք ըսինք, սակայն ինչ կը նշանակէ ծնող բառը, եթէ ոչ իւր բովանդակ նշանակութեամբ առնելով, անձնաւորութիւն ընտանեաց, որ արտադրիչ է անհատից, ձուլիչ մասնաւորաց, որոնք ընդհանուր մարդկութիւնը կը կազմեն. զի անհատներէն կը կազմակերպին ընկերութիւնք, ընկերութիւններէն՝ ազգութիւնք, եւ ազգութիւններէն

digitised by A.R.A.R.@

թագաւորութիւնք. որովհետև մարդն է որ զմարդկութիւնն կ'արտադրէ, և ընտանիքներն են մարդկային ընկերականութեան խարիսխն ու հաստատարանը։

Արդ՝ ընտանիքներն են սրբումն հիմունք ընկերականութեանց, ազգութեանց և թագաւորութեանց. քանզի վերցուր ազգութիւնքն, և ահա կ'անհետին թագաւորութիւնք. վերցուր ընկերութիւնքն, զոյգ ընդ նմին կը լուծուին ազգութիւնք. և վերջապէս վերցուր ընտանիքներն, և ահա նոյնհետայն 'ի չիք կը դառնայ ընդհանուր մարդկութիւնը։

Լուտի կրնանք հետեւցնել թէ՝ ծնողքներն խիստ մեծ պարտաւորութեանց ենթակայ են, և կարող ենք համարձակութեամբ ըսել թէ՝ նոցա պարտաւորութենէն մեծ պարտաւորութիւն չկայ աշխարհիս վրայ։ Սրբումն, ծնողքներ, ճանաչեցէք Ձեր բարձր կոչումն ու մեծ պարտաւորութիւնքն. քանզի ինչպէս տեսաք. ընկերականութիւնք և ազգութիւնք 'ի ձեզ կան հիմնեալ, համայն բարոյական աշխարհի կանգնումն ու գլորումն ձեր պարտաւորութեանց անթերի կամ թերի կատարումէն, և ձեր բարձր կոչման ու տնտեսութեան լաւ կամ յոռի կիրառութենէն կախումն ունի։ Վերջապէս պէտք է գիտնաք որ բովանդակ բարոյական աշխարհի վերակենդանութեան վառարանը, յենարանակետը ընտանիքն է, դուք էք. եթէ բարձրանայ յենարանակետը, կը բարձրանայ ընդ նմին համայն մարդկութիւնը, իմանալի լուսոյն կը մերձենայ, կ'երջանկանայ և կը հոգիանայ։

Իսկ ընդ հակառակը, եթէ փոխանակ բարձրանալու՝ հանապազ խոնարհի, այն ատեն բովանդակ մարդկութիւնը ցաւոց ու վշտաց մէջ կը հեծէ, դժոխոց կը մերձենայ, կը նիւթանայ և խաղառ կը մահանայ։

Այլիմեթէս նիւթական աշխարհս տեղափոխելու համար մարդկութենէն յենարանակետ մի և եթէ խնդրեց. բայց իւր խնդիրն անկատար մնաց։ Սակայն Աստուած, որ ամենակարողն է, ձեզ տուաւ աննախանձաբար բարոյական աշխարհի յենարանակետը, որ է մարդկային մտաց կրթութիւնն ու արտի դաստիարակութիւնն, որպէս զի նովաւ կարող լինիք մարդկային ազգը մինչ 'ի երկինք բարձրացնել, և ընդ Աստուծոյ միացնել, որ մարդկութեան միակ նպատակակետն է։

Քարեպաշտ ծնողքներ, պէտք է խոր ըմբռնէք, որ դուք մարդկային ընկերականութեան ձուլիչներն էք, և որ աւելին է, դուք երկրաւոր նախախնամութիւններ էք, դուք դորձակից էք վերին Նախախնամութեան։

Հրաժեշտ հարկ կայ ուրեմն ձեր վրայ, որ ապագայ սերունդը աստուածապիծ ուղղոյն մէջ ընթացնէք, նոցա հոգին դէպ 'ի միակ ճշմարտութիւնն՝ առ Աստուած կարապետէք։ Մանաւանդ դուք, բարեպաշտ մայրեր, պէտք է որ ձեր կաթին հետ Աւետարանի կենսատիպ պատուէրներն և անմահարար ճշմարտութիւններն ջամբէք ձեր որդւոց և նոցա սրտին մէջ անջինջ դրոշմէք Աստուծոյ սուրբ կամքը. պէտք է որ նոցա հոգւոյն խորը այն բարոյական ոյժը զարթուցանէք, այն կենսանորոգ սկզբունքներն անեղծ քանդակէք, որով միայն կարող կը լինի մարդ ճշմարտապէս ապրիլ աշխարհիս վրայ. քանզի դուք էք նոցա դայեակը, նոցա անմեկին կենակիցը մինչ 'ի նոցա պատանեկութիւն թեւակոխելն։

digitised by A.R.A.R.@

Երբ մանուկն յաշխարհ կուգայ, ամենէն առաջ ձեր գուրգուրացող բաղուկներն իւր ապիկարութեան օգնելու պատրաստ կը գտնայ։ Առաջին անգամ նորա տկարութիւնը դարմանելու համար իրեն հպող ձեռքերն՝ ձերն են։ Այս ձեր ձեռաց շոշափումն է, որ կրզգայ նա զոյգ ընդ լուսոյ։ Դուք էք որ նորա ճիչն ու աղաղակը կը լսեցնէք, նորա հանգստութեան համար ձեր քունն ու հանգստութիւնն անձնուիրաբար կը զոհէք առանց սրտնեղութեան, և ձեր կաթին ջամբմամբն ու գիւղմամբ զայն կը տաժէք և կը զարգացնէք։ Այլ այս ամենը մայրական գորովոյ խանդաղատանաց արգասիքն է միայն, որ գրեթէ ամենակենդանեաց հասարակէ։

Սակայն, բարեպաշտ մայրեր, գուք պէտք չէ որ այսչափով բաւականանաք, զի ասով ձեր պարտքը կատարած չէք լինիր։ Ձեր առաջին պարտքն է մարմնոյն հետ հոգին ալ պարարել, քանզի ձեր ունեցութեան և իսնամոյ յանձնուած արարածները լոկ շնչաւոր չեն, այլ հոգեւոր։ Մի ակողմանի աճումն մահ կ'ենթադրէ, վասն զի ինչպէս որ միաթեւ թռչունն անկարող կը լինի թռչիլ, նոյնպէս նաեւ մարդն անկարելի է որ լոկ մարմնաւոր զարգացմամբ կարող լինի դէմ եդեալ նպատակակիտին հասանել, որ է Աստուածանմանութիւն։ Դուք պէտք է որ երախայի սուրբ բերնին մէջ ամէն բանէ առաջ դեռագոյն Յինն սուրբ անունը դնէք, և կրթէք նորա դիւրաթեք լեզուն, որ առաջին անգամ իւր Արարչին անունն՝ Աստուած թոթովէ եւ արտաքերէ սրբութեան և անմեղութեան զգացումներով։

Բարեպաշտ ծնողքներ, գուք որ յաստուածատուստ կարգեալ մարդկային ազգայ սերնդոյ ստեղծման ու դաստիարակին էք, յերկիւղ Տեառն սընուցէք զանունք, քանզի սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է, և ջանացէք աստուածպաշտութեամբ, հեզութեամբ և ամեն առաքինութեամբ օժտել ու բարգաւաճել կենդանի օրինակ տալով նոցա ձեր անաբատ վարքն ու կեանքը։ Վասն զի երբ երախան աչքը բանայ, իւր տեսութեան առաջին անգամ ենթարկուող իրերը չարս պատ և նորա մէջ գտնուած առարկաներն են։ Ահա այդ սահմանափակ և հունաւոր վայրն է մարդկութեան բովը։ Այս անողորմ աշխարհիս մէջ այդ փոքրիկ սենեակն է երախային աշխարհը։ Այս իւր պաշտպանն, այն է, որբանին բարձունքին՝ սուրբ ու հեռատեսին ակամբ իւր ծնողաց իւրաքանչիւր վարմունքը, մէն մի շարժմունքն ու հանգամանքը մանրազնին կերպիւ կը դիտէ, և զանունք այնպէս կը տպաւորէ իւր սրտին խորը, որ այլ եւս չլսեմ անկարելի, այլ խիստ դժուարին է ջնջել։

Ինչպէս որ և իցէ հայելի ենթակայ է իրեն ներկայացուած մարմնոյն ներուն ճիշդ գծագիրը՝ լուսոյ անդրադարձմամբ իւր մէջ կերպաւորելու, եթէ չեմ սխալիր, նոյնպէս ալ որ և իցէ երախայ ընդունակ է զգայարանաց միջնորդութեամբ իւր սրտին խորը ճիշդ ու անջինջ քանդակել նորա տեսութեան ներկայացուած կենաց և շարժմանց մէն մի փոփոխմունքն ու հանգամանքը և վարուց ճիշդ ընդօրինակութիւնը։ Միով բանիւ նորա սիրտը բարեբեղուն դաշտի մը նմանութիւնն ունի, յորում ինչ որ զգայարանաց միջոցաւ սերմանուինոյնը կը բեղմնաւորէ, և կը պտղաբերէ։ Այսոր ճշմարտութիւնը Յիսուս իւր անստուտ բանիւ կը հաստատէ։

digitised by A.R.A.R.@

«Զ՝որ ինչ սերմանէ ոք՝ զնոյն և հնձէ» եթէ բարի և եթէ չար։ Ահեծ յիմարութիւն է ուրեմն վարսակ ցանել, և ցորեան սպասել։

Օր ըստ օրէ կ՝աճի երախան և կը զարգանայ, բայց կ՝աճին նորա հասակին հետ իւր սրտին մէջ ցանուած սերմունքն ալ, և տակաւ առ տակաւ կը ծաղկին և կը պտղաբերին, ուստի կը մակաբերուի նորա դաստիարակին վարուց ու բարուց որակութիւնը։

Ուրեմն, ծնողքնե՛ր, մի տրտնջաք երբէք ձեր որդւոց անառակութեան վրայ, այլ տրտնջացէք ձեր վրայ, որ նոցա բարի օրինակ չեղաք. ծեծեցէք ձեր կուրծքը, որ հոգի մը սպանեցիք, յաւիտենապէս կորուսիք զայն։ Ընմխիթար լացէք, որ աշխարհս աղետաբեր բեռով մը ծանրաբեռնեցիք, ընկերականութեան փոխանակ վարդ մի ընծայելու, փուշ և տատասկ մատուցիք. փոխանակ մարդկութեան դեղթափ ընձեռելու, բարոյականութեան ժանտախտ պատրաբերեցիք։

Պետք է քաջ գիտնաք, որ ծնողական պարտաւորութեանց առաջինն է բարի օրինակ լինիլ իւրեանց որդւոց, հեղինակ լինել նոցա առաքինութեան, քանզի ոչ ոք կարող է մանկանց լաւագոյն աւանդել բարուց ուսումը քան զայն որ նորա սննդարարն է։ Մարդուս առաքինութեան առաջին վարժապետն իւր ծնողքն է, վասն զի բանաւոր էակ մը իւր բովանդակ կեանց մէջ կատարելու գործողութիւններն ընտանեաց մէջէն կը սկսի, և որոյ առաքինութեան առաջին ապարէզն իւր հայրենի տունն է։ «Նոցա սրտին խորը կը տպաւորի առաքինութիւնը, երբ նորա ջերմ կնիքը ծնողական սէրն է, կ՝ըսէ Թէսաւրոս, և թէ նոքա աւելի բարի օրինակով կը կրթուին քան թէ բարի խրատուք. որովհետեւ առարկաներն աւելի աչաց կ՝ազդեն՝ քան թէ ականջաց։ Իսկ խրատները թռուցիկներ են, որոնք աշխարհիս վրայ հիմունք չունին, այլ յողդողդ միտնոպարտին մէջ կը ծփան ու կը ծածանին։ Իսկ ընդ հակառակը՝ վարուց օրինակը ապառաժի վրայ հիմնեալ շէնք մ՝է։ Ոչ մի պատուէր, ոչ մի ուսումն, ոչ մի օրէնք այնպէս չեն տպաւորիր, ինչպէս ծնողական օրինակը։ Ինչ որ գործքով կ՝աւանդուին՝ աչքով կըտրվուին և սրտին մէջ կը գրուին։ Մի բնական օրէնք է այս»։

Ուրեմն, բարեպաշտ ծնո՛ղք, ծերերէն աւելի ձեր որդիներէն պատկառեցէք. խարշեցէք նոցա առջեւ ուխտադրուժ և երդմնազանց լինելէ, սուտ խօսելէ, վասն զի ստութեան հայրը սատանան է. երկիւղ զգացէք այդ անմեղ հոգիները ճշմարտութեան շաւղէն զակատելու վատ տոչորութենէն, Էկ խօսքով զգուշացէք զանոնք դայթակղեցնելէ, զի այս իսկ է Աստուծոյ պատուէրն. «Իվ որ այս մանուկներէն մին՝ իմ անուամբ կ՝ընդունի, կ՝ըսէ Յիսուս, զիս կ՝ընդունի, և ով որ զիս կ՝ընդունի, իմ առաքիչը կ՝ընդունի. իսկ ընդ հակառակն, ով որ ինձ հաւատացող այս փոքրիկներէն մին դայթակղեցնէ, աւելի լաւ է որ այնպիսի մարդուն վզէն քար կախուէր, և ծովը ձգուէր, դերեզմանի անդամ չարժանանալով»։

Ընդ ուրեմն, բարեպաշտ ծնո՛ղք, զգուշանալ պարտքի, որ դայթակղութեան առիթ չը լինիք ձեր որդւոց թէ անվայել վարքով և թէ խօսքով. այլ ջանացէք որ գեղեցիկ վարքով ու բարի օրինակով նոցա փրկութեան պատճառ լինիք, զի այս իսկ է ձեր պարտքն և միանգամայն փառքը։

digitised by A.R.A.R.@

Ձեր դատարակութեան շէնքը Աւետարանի հիման վրայ հաստատեցէք. վասն զի աւետարանական ճշմարտութեան և գեղեցիկ բարոյականի վրայ հիմնեալ ուսումն ու կեանքը միայն կը մարմի լուսաւորել մեր միտքն ու հոգին և մխիթարել մեր սիրտը ճշմարիտ մխիթարութեամբ։ Ուսուցէք նոցա ձեր կենաց կենդանի օրինակաւ, որ ճշմարտութեան համար մեռնիլն կեանք է, և թէ՝ ճշմարիտ գեղեցկութիւնն 'ի համեստութեան կը կայանայ, և ոչ 'ի պչրանս։ Ուսուցէք նոցա որ աշխարհային ըստուերատիպ մեծութեան ու բարձրութեան չը ձգտին տենչանօք. զի ճշմարիտ մեծութիւնն ու բարձրութիւնն աստուածային սիրոյ մէջ կը բովանդակի. «Քանզի մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր»։ Ուսուցէք նոցա, որ ամենն բանէն աւելի քրիստոնէական Եկեղեցին սիրեն, խղճի աղատութիւնն պաշտեն և Աստուծոյ օրինաց հպատակին։

Ուսուցէք նոցա որ բոլոր մարդկային ազգը աշխարհիս վրայ սփռուած մեծ ընտանիք մ'է, բոլոր ժողովուրդք՝ եղբայր են, և կը պարտաւորին զիրար սիրել. զիրար սիրելն՝ իրարու անձնուէր լինիլ կ'ենթադրէ, և անձնուիրութեան հեղինակը նոյն ինքն Քրիստոս է, որ մեռաւ մեզ համար, որպէս զի իւր մահուամբ մարդկային մեռեալ ազգը կենդանացնէ։ Անձնուիրութիւնը զմեզ երկնաքաղաքացի կ'ընէ, զի չեմք յաշխարհէ աստի։

Ուսուցէք նոցա որ անմահ սիրով սիրեն և անարատ պահպանեն իւրեանց կրօնքն ու հաւատքը, քանզի նա է որ մեր քայլերը առ Տէր կ'ուղղէ, և մարդոյն այս բազմարկած աշխարհիս մէջէն առաջնորդելով՝ անսայթաք իւր նպատակակիցին կը հասցընէ, որ է միանալ ընդ Աստուծոյ։ Ուսուցէք որ ճշմարտութեան լոյսը սիրեն, որպէս զի լուսոյ և տունջեան որդիք լինին, և թէ պաշտեն զԱստուած 'ի բոլոր սրտէ և 'ի բովանդակ մտաց, և երկրպագեն նմա՝ հոգւով և ճշմարտութեամբ, զի Աստուծոյ կամքն է հոգւով պաշտուիլ և ոչ շրթամբք միայն. քանզի ինքն իսկ հոգի է և ճշմարտութիւն։

Յիսուսի Աւետարանը, որ գեղեցիկ դատարակութեան և բարոյական վերակենդանութեան սկզբանց շտեմարանն է, բացէք մանկանց առջեւ, և 'ի լուր նոցա կարդացէք, եթէ ուսուցած չէք տակաւին նոցա կարդալ և դեռահաս մանկանց թարմ ու խոպան սիրտը կենսաձիր ճշմարտութիւններով սնուցէք, և կանխեցէք նոցա սրտին ու խղճին մէջ մուծանել քրիստոնէական կրօնքը, որ կենաց կրօնքն է, և աւետարանական պարտուց բովանդակութիւնը, քանի որ նոցա սիրտն ու խիղճը տակաւին սնապաշտութեան, ունայնասիրութեան և աշխարհային կորստաբեր կրքից կարծր կեղեւով շրջապատուած չեն, ապա թէ ոչ՝ խիստ դժուարին կը լինի 'ի վերջոյ նոցա սիրտն ու միտքը բարոյապէս մշակել և ներքին ու արտաքին մարդիկն իրարու հետ դաշնաւորել։

Օ՜ անոնք Յիսուսի արիւնամած խաչին պատուանդանը տարէք, պատմեցէք նոցա այդ անմահ գառին զենման սրտագրաւ և սքանչելի խորհուրդը, դգացուցէք նոցա Յիսուսի անբաւ սէրը, որով 'ի գութ շարժեցաւ մեր ողբալի կացութեան վրայ, և երկնից բարձրութենէն մինչ 'ի երկիր խոնարհեցաւ, և իրենց նման

digitised by A.R.A.R.@

մանկանալով՝ 'ի խանձարուր պատեցաւ, որպէս զի մարդկային ազգը մեղաց դժնդակ գերութենէն ազատէ և արտով բեկեալները միսիթարէ, և թէ սիրեց զիրենք իւր որրանէն սկսեալ մինչ 'ի գերեզման տնպատուամ սիրով։ Յով զարթուցէք նոցա սրտին մէջ առ Յիսուս այն մեծ երախտագիտական սնկեղծ ու մաքուր զգացումը, զոր մեզմէն կը պահանջէ Աստուած։ Օգնութեացուցէք նոցա, իրենց առ Աստուած, առ անձն, առ ընկերն, այսինքն՝ առ համօրէն մարդկութիւնն ունեցած պարտաւորութիւնքն, պարտուց անխափան բնութիւնն և պատուիրանազանցութեան մահաբեր հետեւանքն։ Տուէք նոցա ձեռքը՝ այն աստուածային մատեանը, հին և նոր ուխտի Կտակարաններն, որոնք համայն մարդկութեան համար գրուած են, ինչպէս ծերոց, նոյնպէս երիտասարդաց և մանկանց համար։

Թող բռնեն նոքա իւրեանց անզօր ու փափուկ ձեռքերով այդ յանմահութիւն աւաջնորդող Աստուածաշունչ գրեանքը, Թող կարդան նոքա իւրեանց դիւրաթեք լեզուաւ այդ աստուածագիծ յայտնութիւնքը, և Թող առատ նիւթ քաղեն իրենց կոչման վսեմութեան և մարդկային հոգւոյ անմահութեան վերայ, և ուսանին որ իրենք Աստուծոյ պատկերն են, նորա կենդանի տաճարներն և միանգամայն որդիներն են։ Թող ուսանին նաև որ հարազատ որդին պարտական է յանձն տպաւորել՝ իւր հօր մէն մի կատարելութիւնքն և իրրեւ 'ի հայելւոջ նորա նմանութիւնն յանձին բերել։

Բայց հոս նոր խնդիր մը կ'ելլայ մեր առջեւ. կնճռաւոր խնդիր։ Մենք ըսինք թէ ծնողք պարտաւոր են իրենց մանկանց Աստուծմն ուսուցանել։ Բայց միթէ կարելի է առանց ուսանելու ուսուցանել, առանց կարդալ գիտնալու կարդացընել։ Անկարելի է այս։ Ինչպէս ուրեմն, բարեպաշտ ծնողք, ձեր դաստիարակութեան հիմն Աստուծոյ անդրդուելի անկիւնաքարին վերայ պիտի դնէք, մինչդեռ ձեզմէն մեծ մասն ոչ զայն կարդացած է և ոչ իսկ նոր բան շինողական սկզբանց ծանօթացած։

Այս կը տարակուսիմ, որ իմ այս խօսքերս իսկ ձեր շատերուն համար օդահնչիւն անհասկանալի բառեր են։ Կան, կան ձեր մէջ շատեր, որոնք իւրեանց մայրենի լեզուն խոպան մոռացած՝ այլաբարբառ լինելն նախատանք կը համարին, որով իւրեանց հարազատութիւնը կորուսած և ըստ ամենայնի խորթացած են։ Որչափ ցաւալի ընթացք։

Մեծարոյ հանդիսականք, մեր նախնեաց այնքան փառքերուն ու ճոխութիւններուն մեր ազգութիւնը պահպանելու համար միմիայն կրօնքին և մայրենի լեզուին բաժին մնացած են մեզ, որ մեր ազգութեան տարերքն ու էական մասունքն են։ Պէտք է որ ասոնք ալ մոռացութեան բաղնին խորը թաղենք, միթէ վայելէ մեզ, որ եղբայր լինինք և իրարու լեզուն չըհասկնանք, Հայ լինինք և 'ի նախատինս հայութեան հայերէն չըգիտնանք։ Մեր այս ներկայ վիճակը մեր ազգութեան նկատմամբ այնչափ ծանրակշիռ, այնչափ տպառնալից է որ ազգասէր ոգին կը նուազի երբ նորա աղետալի հետեւանաց վրայ կը մտածէ. մեր այս տարտամ ու տխուր վիճակը մահ կըսպառնայ մեր ազգութեան, եթէ երկար շարունակուի։

Ուշաբերինք, մեծարոյ հանդիսականք, ուշաբերինք և մեր ոտից առջեւ գտնուած անճոռնապրելի քաքիւ-

digitised by A.R.A.R.@

բինթոսը տեսնենք, կորովի աչքով տեսնենք, որ նորա սահուն եղբին վերայ կը գտնուինք, և մի քայլ եւս բաւական է մեր անկանգնելի գլորման պատճառ լինիլ։

Մեզ իրար կապող և մի ազգ կազմող երկու յոգ միայն մնացած են մեզ՝ կրօնք և մայրենի լեզու։ Մեր բնիկ աշխարհը, մեր դիւցազուն ու արիասիրտ նախնեաց խանձարուրն ու որբանն եղող փառահեղ Հայաստանը՝ այժմ տխուր աւերակաց սրտաճմլիկ և մորմոքեցուցիչ տեսարան մը կը ներկայացնէ հայրենասէր աչաց։ Մեր այն ճոխ թագն ու գաւազանը, մեր աշխարհասասան թագաւորութիւնը չը կան մեզ համար, ի հող տապանի կը ննջեն մեր արի զինուորներն, որոնք իրենց արեամբ մեր հայրենի երկիրն արտաքին թշնամեաց դէմ պաշտպանեցին, կործանած են մեր արքայական շքեղ պալատներն, փոշի են դարձեր մեր թագաւորական աթոռներն. չը կան մեզ՝ արտաքսած որդւոյս համար, մեր այնքան փառքերէն և ոչ ինչ. մնացած են մեզ միայն կրօնք և մայրենի լեզու։ Ահա մեր ներկայ ճոխութիւնն ու հարստութիւնն։

Ու ինչ պիտի լինի մեր վախճանը, եթէ այս երկու հայրենի մեծ աւանդներն եւս առ ոչինչ համարեմք և կորուսանեմք։

Երբ անխաբ խղճիւ և անաչառ քննութեամբ մեր սոյն վտանգաւոր վիճակը հետազօտենք, արմատն կը գտնենք տգիտութեան մէջ և յաւէտ ընտանեաց մէջ, այսինքն հարց և մարց անդաստիարակութեան և անկրթութեան մէջ, նոցա պարտուց և իրաւանց անգիտակցութեան մէջ։ Այս պէտք է խոստովանիլ, որ այս ամեն աղետից առաջին պատճառը գլխաւորաբար մարց անուսումնութիւնն ու անգիտակցութիւնն է։

Ինչպէս խաւարը՝ լուսոյ պակասութիւնն է և տգիտութիւնն՝ գիտութեան, նոյնպէս եւս այս ամեն վշտալի չարեաց իսկական պատճառը՝ ընտանեաց դաստիարակութեան ու կրթութեան պակասութիւնն է. վասն զի երբ ընտանիքներն, որ մարդկութեան խանձարուրներն են. Աստուծոյ իմաստութենէն և երկիւղէն թափուր և պարտուց ու իրաւանց գիտակցութենէն ու կիրառութենէն զուրկ լինին. երբ Աւետարանի վերածնելութեան լուսէն հեռացած և իրենց դաստիարակութեան յանձնուած անմեղ էակաց միտքն ու սիրտը լաստ արժանաւոյն մշակած չը լինին. ահա այն ատեն բովանդակ մարդկութիւնը թանձր խաւարով կը ծածկուի, նորա միտքը աշխարհային նսեմ ամպով կը շրջապատի, սիրտը կը մեղկանայ, հոգին կը լքանի, որով կը ջլատի և անձնատուր կը լինի կրից և ամեն չարիք երկնող անձնասիրութեան և ծայրայեղ փառասիրութեան դժոխային կռոց առջեւ անպատկառ կը ծընրադրէ։

Արդարեւ խիստ տխուր է մեր ազգի վիճակն կանանց կրթութեան և յառաջադիմութեան նկատմամբ։ Այց եթէ հայ անուամբ կը պարծիմք, պէտք է որ նոցա համակերպինք, նոցա գործը գործենք, նոքա գիտէին կարդալ և գրել. նոքա հաւածանաց դարերու մէջ աղօթելով կը սնանէին, մարգարէից ընթերցմամբ կ'ամրէին եւ Աւետարանով կ'ապրէին։ Սեցէք թէ փափկասոս Հղիշէն ինչ կ'ըսէ նախնի հայ կանանց և մարց նկատմամբ. «Սաղմոսք էին, կըսէ, մշտնջենաւոր՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէից»։—

digitised by A.R.A.R.@

Ուրեմն, մեծարոյ հանդիսականք, մեր այս տխուր վիճակին վերջ մը տալու համար դպրոցներ պէտք են մեզ. հարկ անհրաժեշտ է, որ ամեն ուրեք երկսեռ դպրոցներ ունենանք, և պէտք է որ անոնց մէջ առաջին տեղը գրաւեն Աստուծոյ փրկարար ուսմունքն և մեր մայրենի լեզուն։ Ունանք ուրեմն ըստ արժանւոյն սպագայ հայրեր ու մայրեր պատրաստել մեզ, բարոյական և մտաւորական զարգացմամբ մեր նոր սերունդն զարգացնել և զօրացնել։

Այս կը համարիմ միակ միջոց ազգային փրկութեան և յառաջդիմութեան, և ահա այսու կը կնքեմ խօսքս։

Մելքոն Ս. Յակոբեան
Թրքայի։

Հետեւեալ քաջալերական յորդորը՝ զոր ի դիմաց Ուխտաւորաց ուղղած է առ Յառանգաւոր աշակերտս Արժանապատիւ Մեսրոպ վարդապետն Օկայցեան, միաբան Ս. Ուխտին Վարագայ, արժան կը համարիմք հրատարակել իբրեւ յայտնի նշան իւր յառաջադիմասէր ոգւոյն և զգայուն սրտին։

Սէրոյ Յակոբեանց Յառանգաւոր Դպրոցի աշակերտեցոյ Արդիւ 6ի ներկայացուցած լեզու հանդիսին փոխարէն շնորհակալութիւն։

Ազնիւ մանկունք, ինչպէս դուք զգայուն կերպով հանդիսացայք տերունական ուխտաւորաց, հետեւաբար և ձեր ծնողաց առաջ, ձեր յառաջադիմութեան քաջընթաց քայլերը կը պարտաւորեն զիս փոխադարձաբար շնորհակալութեամբ ուրախակցութիւնս յայտնել, ձեր վսեմ հանդիսին ներկայ եղող այնչափ բազմամբոխ ժողովրդեան կողմէն իբրեւ թարգման պիտի խօսիմ ձեր հետ, ուստի կը խնդրեմ որ ընդունիք։

Աշխարհիս ասպարիզին մէջ առաջին տեղն բռնած է. դուք ճշմարիտ երջանկութեան առաջին ժառանգորդներն էք. դուք ձեր մատաղ հասակին մէջ դպրոցականութեան վիճակեցայք, որոյ դաստիարակութեան արգանդէն բարւոք մարդ պիտի ծընանիք. գիտէք ինչ կոչում կոչուած էք, կոչում մը՝ որուն աշխարհս չարժէր։ Իւրաքանչիւր անձը կրնայ միտ բերել իւր տղայութեան հասակէն՝ի վեր մինչեւ ցարդ եղած աշխարհիս կենցաղավարութեան դիւրափոխ ընթացքն, որուն մէջ ճշգրիտ կը տեսնուի միանգամայն և մարդն խաղալիկ եղած աշխարհի անվերջանալի երջանկութեանը հետ. բայց դպրոցի կոչումն այնպէս չէ. մինչդեռ աշխարհի փառաց երջանկութիւնք՝ միայն խաբուած աչքերը կը շլացնեն, բայց դպրոց, որ ուսման ասպարէզն է, սիրտ և միտք կը հարստացնէ, այնպէս վստահութեամբ՝ որ աշխարհի ձախորդ դէպքերը մէկ տեղ գալով չը պիտի կրնան կողոպտել։ Ի՞նչ երջանիկ է այն մարդն՝ որ բնաւ իւր ունեցած հարստութեանց կողոպտուելէն վախ մը չունենար. վաճառականաց նաւերը կ'ընկղմին, մեծածախք շէնքերը կ'այրին ու կը փլչին, հօր մը զաւակները կը մեռնին, ծերունին անմխիթար կը մնայ, մարդկանց առողջութիւնք կը խանգարուին, որով ամեն երջանկութիւնք կը խախտին. աշխարհիս զանազան տեսակ ձախորդութիւններն զմարդիկ կ'աղքատացնեն, որով այս աւուր ուրախն վաղն տրտում կը դառնայ և այլն. բայց ձեզ բաժինկած դաստիարակութիւնը և ուսմունքը ոչ ոք չը կրնար ձեզմէ հանել։ Թող աշխարհն իւր խաղալիքներն խաղայ, որ

digitised by A.R.A.R.@

արդէն իւր բնաւորութիւնն է, բայց քաջ գիտցէք որ ձեզմէ բան մը չըպիտի կրնայ կորզել Թող Աղէքսանդր աշխարհակալէ, Թող Էնկիթմուրն ազգեր կործանէ, բայց ձեր հարստութիւնը միշտ ապահովեալ է. Թող աշխարհ իւր սիրոյներն տրտմեցնէ, դուք որ հանգերձեալ էք ճշմարիտ մարդ լինելու, պիտի խնդայք աշխարհի Թըշուառութեանը վրայ, զի ճշմարիտ մարդու բաժին չէ աշխարհի տուած հարուածներն։

Աղնիւ մանկունք, բարի դաստիարակաց ձեռք զձեզ Հայաստանի լեռներէն իբրեւ անուշահոտ ծաղկունք ժողովեց և բերելով Միսնի պարտիզին մէջը անկեց. զձեզ ոռոգանող ջուրն աշխարհի բարերար Փրկչին շընորհաբուղխ աղբիւրներն են, որոնք իւր անօրինական պաշտելի սուրբ տեղերէն կը բղխին և միանգամայն բոլոր տիեզերքը կը զովացնեն. դուք որ ձեր զգալի շրթունքներով միշտ կ'երկրպագէք այն սուրբ տեղերուն եւ այն աղբերակներու շուրջերը շարուած էք, ոչքան պիտի զօրանան և 'ի խոր ձգին ձեր արմատները, յոյս մեծ ունիմք որ 'ի ժամանակին ձեր պտուղները պիտի տայք։ Դուք հարազատ Հայոց զաւակներ էք, Հայոց տգիտութեամբ գառնացած բերանները պիտի քաղցրացնէք. Հայաստանը, ձեր սիրելի հայրենիքը, յորմէ այժմ բաղցակայ էք, ձեզ կլսպասէ. միտ բերէք նախնեաց յիշատակները, երբեմն ձեզ պէս մանկունք Աղէնքի մէջն ուսան ու դաստիարակուեցան, որոնք բեղմնաւորեալ 'ի Հայաստան դառնալով, Հայոց համար ոսկեղինիկ դար մը ծնան։ Դուք ալ Միսնի սուրբ ծոցին մէջը ամփոփուած էք, Հայաստան մեծ յուսով կլսպասէ ձեր 'ի հայրենիքը վերադարձին. մանակի բերմունքը Հայոց երկիրը կորպացուցեր է, բայց ձեր արօրը 'ի խոր պիտի թափանցէ, տգիտութեան փուշերը Հայոց արգաւանդ հողէն արմատախիլ պիտի ընէ. այն ատեն ձեր ունեցած սերմն պիտի ցանէք չէ թէ փուշերու մէջը, այլ յերկիր պարարտ, որոյ պտուղ հարիւրաւոր կը հնձուի։

Յիշեցէք, Հայոց մանկունք, աշխարհի սկիզբէն 'ի վեր մինչեւ ցարդ ամէն մարդն ալ ձեզ պէս մանուկ եղած է. աշխարհաշէն թագաւորները, պատկառելի նախարարաց խումբերը, եկեղեցաշէն սուրբ հարք և շատ մը հայրենասէր և ազգասէր մեծագործ անձինք և այլն, բոլորն ալ տղայութենէ բարձրանալով իրենց անուանց տիտղոսները ժառանգեր են իրենց գործքերուն համեմատ։ Դուք ալ այժմէն սկսելով, ժամանակին պիտի գործէք ինչ որ ձեզ սահմանուած է, ինչ որ ձեր ձիրքերն ձեզ կ'առաջնորդեն։

Յոյսերնիս մեծ է ձեր բարի դաստիարակաց վրայ, որոնց ձեռքը ձեզ կ'առաջնորդեն. ձեզ համար առ այժմ ուրիշ բան մը չկայ, միայն խորին հընազանդութիւն առ դաստիարակս ձեր. ձեր այս թանկագին շրջանին մէջը անդուլ աշխատութիւն և եռանդուն ուսումնասիրութիւն։ Ուրեմն, գործեցէք Հայոց սիրելի մանկունք. ձեզ համար գարուն է, մեղուի նման ծաղկունքները ժողովեցէք, սրտերու համար քաղցրաճաշակ մեղր՝ և մտաց լուսոյ համար՝ մաքուր մոմ պատրաստեցէք, որ քաղցրանան տգիտութեամբ դառնացած խորհուրդները, որ լուսաւորուին նեմացած սրտի տաճարները։

Ապրիլ 6 'ի ձեր ներկայացուցած շքեղ հանդէսն զմեզ յուսադրեց. ձեր երեց եղբարց ճառախօսութիւնքն Միսնի դպրոցիդ յառաջադիմութեան քաջալերիչ է. ձեր բարի դաս-

digitised by A.R.A.R.@

տիսարակներն ձեր ուղին շտկած են, անխոտոր ձեզ կ'առաջնորդեն, մինչև ձեր նպատակակետն հասնիք։ Տեբուռնական ուխտաւորաց երեսաց վրայ ժպիտներ կը փայլին, երբ զձեզ յառաջադիմութեան ասպարէզին մէջը կը տեսնային։

Շնորհակալ եմք առ այս Մեծնապատիւ Աստուծոյ Սրբազան Պատրիարքք Հօրմէն, որ իւր պաշտօնին կոչուած օրէն 'ի վեր փոյթ ունեցեր է դպրոցիս յառաջադիմութեան և բարեկարգութեան. շնորհակալ եմք Ս. Աթոռոյս Արժանապատիւ սուրբ հայրերէն, որ Նորին Սրբազնութեան նեցուկ եղած են առ այս իրենց ջանքերնին ալ չը խնայելով. շնորհակալ եմք յաւէտ վանուցս Վարչութենէն որ իրենց սիրելի դպրոցն օր աւուր աւելի զօրանալու համար, օրինաւոր Տեսչութեան և դաստիարակաց յանձնած են զայն, որոնք գիտեն ընկերականութեան համար դաստիարակեալ արտեր պատրաստել, գիտեն մոտաց ճրագներն վառել և գիտեն Հայրենեաց համար նուիրական զաւակներ հասցուցանել։

Հայոց մանկունք, զձեզ տեսանք իբրեւ առհաւատչեայ Հայոց յառաջադիմութեան. կացէք դուք 'ի սէր հայրենեաց և մեք յուսալ 'ի սէր ձեր՝ սպասելով ձեր պտղաբերութեան. 'ի վերջոյ կը մաղթենք ձեր բարերար դաստիարակաց համար ժրաջան բաղուկներ, որք կարող են զձեզ պաշտպանել, և ձեզ համար ալ՝ քաջընթաց յառաջադիմութիւն։

Ի դիմաց տերունական ուխտաւորաց

Մ՝եսրոպ Վ. Ածկոյեան
միաբան Վարագայ։

1872. Մարտ 19
Յերուսաղէմ։

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն տես թիւ 3։)

Զիք ինչ այնչափ առաւել օգտաւէտ շնչարգելութեան, որչափ չոր, մաքուր և բարեխառն օդ. քանզի փակեալ օդ քաղաքի կամ բնակութեան՝ վնասակար է յոյժ։ Վասն որոյ պարտ է հիւանդին հոգալ զտեղի բնակութեան, որոյ օդն իցէ բարեխառն։ յատկապէս եթէ իցէ այն ծովեզերեայ տեղի, ուր և կարէ յամենայն առաւօտ լուանալ 'ի ջուր ծովու, և երբեմն մի կամ երկու ափ ըմպել 'ի ջրոյն։

Դեղ։

Ի սոյն հիւանդութեան զանազան բժիշկք առեալ են զմորձ պէսպէս դեղոցրէից, այսինքն՝ եփուած քրտնաբեր փայտից, ոգի արմատոց շրջանի արեան, փոշի վառարիչ բալզամի, դեղ հատ փսխման, խարանադեղ կամ օձանելի կրծոց, թանձր խահվէ, նըշոյք չոգոլաստ կաթամբ եփեալ, ծըխանելի տերեւ ինչ կլոպան, և այլն և այլն։ Այլ յայսցանէ ամենից ոչ մին և ոչ միւսն բաւական է տալ կատարեալ առողջութի։ Այլ միայն օգտաւէտ բժշկութիւն այս հիւանդութեան է որպէս գրեցաւ 'ի վերոյ, բնակիլն 'ի չոր և 'ի բարեխառն տեղւոջ կամ 'ի ծովեզեր. հետեւեալ պատշաճ կերակրոց, 'ի բաց կալ ամենեւին 'ի զօրաւոր ըմպելեաց. զգուշանալ 'ի սաստիկ հոգեմոց, յատկապէս 'ի Թիկանց կուսէ. յամենայն առաւօտու և գէպ յերեկոյեան, այսինքն 'ի մուտանել արեւու

առնել զկանոնաւոր կրթութիւն՝ ձեռնելով ի բաց օգի, կամ շարժելով ըզ ձեռս և զոտս պէսպէս եղանակաւ որով հնար լիցի շնչերակաց, ջղաց և մկանանց ընդարձակումն գտանել։ Բայց զգուշանալ պարտ է զի մի կրթութիւնն իցէ անդրբան զկարողութիւն հիւանդին, որ յաւէտ վնաս է քան օգուտ։

Այսեւ փոյթ տարցի պնդութեան որովայնի հիւանդին, երբեմն առնելով զթեթեւ լուծողականս, որպէս բարեգոյնն է կասպրոլի, կամ սենամանա. և զգուշանալ ի նստելոյ կամ յերկար կանգնելոյ ի խանաւուտ տեղւոջէ և ի թացեալ զգեստուց, որով եթէ շնչարգելութիւնն չէ ժառանգական, կամ միանգամայն փարատի, կամ ոչ լիցի այնչափ սաստիկ, որչափ բնութիւն այս ախտի պահանջէ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Կոլոյծ կամ անդամագօսութիւն։

Այս սարսափելի ախտ յանկարծակի ըմբռնէ զմարդ կորստեամբ զգայութեան և շարժման անդամոց. և որչափ տեւէ այն, երեւի հիւանդն իբրեւ զմեռեալ. միայն կենդանութեան նշան երեւի ի մէջ թոքոցն և սրտին։

Թէպէտ այս հիւանդութիւնէ միշտ մահաբեր, բայց երբեմն եւս հնար է բժշկել զայն, եթէ ըստ ժամանակին պատշաճապէս խնամ տարցի հիւանդին։

Այս ախտ պատահի յաւէտ ի նստողական անձինս, որք կեան անվայելուչ կեցութեամբ, միշտ վայելելով առատ և իւղալից կերակուրս և զօրաւոր ըմպելիս՝ առանց պատշաճ կրթութեան. և որ բազում անգամ պատահի ի ձմերան և յանձրեւային եղանակի, այլ ի ջերմին վայրս յամենայն եղանակի։

Պոպճառ։

Պառճառ յանկարծակի կաթուածոյ է ճնշումն ուղեղան գլխոյ պատճառեալ յառատութենէ արեան կամ ի ժողովմանէ ջրային հիւթոց ի գըլուխն։

Այսեւ հնար է պատճառիլ յայնպիսեաց, որ յորդէ զբջան արեան առ գլուխն, կամ արգելու զդարձ այնորիկ ի գլխոյ, պատճառեալ ի սաստիկ բարկութենէ կամ ի տարտամութենէ մտաց. յընդերկար հայելոյ խատրնակի յառարկայ ինչ, ի խիստ կապանաց պարանոցի, ի ղեղս և ի շուայտ կեցութենէ. յարգելմանէ միզոյ, ի կարի ջերմ մարմնով դիմելոյ առ սառն կամ առ զովարար օդ գիշերոյ, ի կարի երկար լողանալոյ ի ցուրտ կամ ի ջերմ ջուր, ի յանկարծ ներգործութենէ վաղաշրջտական ախտի. ի սովորական շարաւալից պալարաց, կամ ի յանկարծ ցամաքելոյ կամ խափանելոյ սովորական արտաթորման. որպիսի են, թութք, դաշտան, բընական կանոնաւոր լուծումն որովայնի, և այլն։

Նշանք այս հիւանդութեան, գիտելիք և բուժումն։

Սովորական նախագուշակութիւն այս հիւանդութեան է պտոյտ գլխոյ, փոփոխամտութիւն, կորուստ յիշողութեան, թմրութիւն. հնչիւն ականջաց, մղձաւան գիշերոյ, ըստ ինքեան արտաթորումն սրտաւուց և դժուարին շնչառութիւն։

digitised by A.R.A.R.@

Եւ յորժամ այս նշանք երեւին յումեք, պարտ է նմա երկնչիլ 'ի յանկարծակի հասանելոյ 'ի վերայ սոյն ամենադաժան ախտի. և գուն գործեսցէ ունել զառաջս նորա թեթեւ և անդոր կերակրով, արիւն առնելով և թեթեւ լուծողական դեղոց հետեւելով։

Յարիւնային կսմթուածս՝ եթէ հիւանդն ոչ մեռանիցի իսկոյն, կերպարան նորա երեւեսցի զուարթ և արիւնագոյն, երեսն այտուցեալ. երակք արեան՝ յատկապէս պարանոցին և քնոցն՝ լի. զարկ բազկացն սաստիկ, ակունքն ցցուեալ և անշարժ, և երբեմն եւս փակեալ. դժուարին շնչառութիւն եւ անդադար խորդիւն սաստիկ։

Այս տեսակ կսմթուածս պարտ է առնուլ զամենայն պատշաճ միջոցս նուազելոյ զբուռն շրջանի արեան առ գլուխն, պահել զհիւանդն ըստ ամենայնի հանգիստ և հով. յընկողմանիլն նորա պարտ է դնել զգլուխն բարձր և զոտսն ցած, կամ կախել առ վայր, թուլացուցանել զզգեստսն. եթէ լցեն կապանք'ի պարանոցն՝ բանալ խստաւ. մուծանել 'ի սենեակն օդ զովարար՝ բանալով զդրունս և զպատուհանսն միանգամայն, կապել ըստ մէջքն պինդ կապանօք, առ 'ի խափանել զշրջան արեան ստորին մարմնոյ մասին 'ի վեր։ Եւ յորժամ հիւանդն զետեղեսցի յայսոլիսի պատշաճ դրութեան, ապա հարկէ իսկոյն արիւն առնուլ'ի պարանոցէն կամ 'ի բազկաց, զոր ըստ պահանջման պարտ է կրկնել. արկանել կակղացուցիչ կամ լուծողական գրեխս իւղով ձիթապտղոց կամ նոր կարագով առ իւրաքանչիւր երկու ժամն անգամ մի, և ձգել 'ի յուսամէջքն և 'ի սրունս ոտից զհարանադեղ սպեղանիս։

Իսկ յորժամ մահագուշակ նշանք հիւանդութեանս պակասին, և հիւանդն կարէ կլանել զդեղ, պարտ է առ ժամայն տալ նմա ըմպել զթոյլ լուծողական հեղուկս, այսինքն՝ եփուած Ռամրինդոյ, շիճուկ ֆրիմպարի, կամ շիճուկ կաթին ընդ ֆրիմպարպարի, գլաբերայ աղ, սենամանա և այլն։

Այնոքիկ որք ենթակայ են սոյն հիւանդութեան, և կամ որք արդէն վարակեալ ենանգամ մի այսու ախտիս, պարտին կեալ կարի զգուշութեամբ 'ի կերակուրս և յըմպելիս. զի կերակուր նոցա պարտ է լինիլ միշտ թեթեւ և դիւրամարս։

Մենայնիւ զգուշասցի 'ի համեմեալ և 'ի յոլով կերտկրոց, 'ի զօրաւոր և ոգելից ըմպելեաց, 'ի բարկութենէ և 'ի տարտամութենէ մտաց, 'ի սաստիկ ցրտութենէ կամ 'ի ջերմութենէ. կնդեղզգլուխն և լուանալ միշտ ցուրտ ջրով, պահել զոտսն միշտ ջերմ. զգուշանալ 'ի թացութենէ ոտից, լոյծ պահել զորովայնն մեղմ դալարեօք կամ թեթեւ դեղորէիւք, այսինքն՝ առնելով կոպրոլէ կամ ֆրիմպարպարս, սենամանա, կամ եփուած Ռամրինդոյ ընդ անգղնական աղի, և այլն։

Լաւեւ չէ պարտ զանց առնել զթեթեւ կրթութիւնս ըստ չափու կարողութեան անձին։

Կարի օգտակար ներգործութիւն արդելոյ զկսմթուածն՝ է բանալ զմշտատեւ խարանս յերկոսին բազուկս, զոր և ամենայն զգուշութեամբ խնամել պարտ է զի մի փակեսցին առանց բանալոյ զայլ փոխարէն այնոցիկ։

Կսմթուածահար անձինք պարտին ամենայնիւ զգուշանալ զի մի երթիցեն յանկողին լի սամանքսով, կամ ննջել՝ զգլուխն ունելով 'ի ցած բարձի և կապանս ինչ 'ի պարանոցի։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ջրային փարո�։

Ի մէջ հիւանդութեանց՝ որք պատահին ազգի մարդկան, ջրային տկարութիւնքն են խառնակեալ և գրեթէ ամենեւին անբժշկելի։

Ինձ մատեան մի չէ բաւական եթէ կամիցի ոք գրել զպէտսպէս փոփոխական երեւոյթս այսց հիւանդութեանց, զի ունին նմանութիւն այլոց ուխտից, և են հազիւ համանման յերկուս անձինս, կամ՝ ի մի և նոյն անձն ի զանազան ժամանակս։ Իբրեւ զՊրոտէոս անընդհատ փոխին ի կերպարանս. և յիւրաքանչիւր հանդիպման նոցա՝ հիւանդն զգայ նորանոր նշանս, զոր յառաջ չէր փորձեալ, և ի կրկնելն հետզհետէ՝ զմին քան զմիւսն սաստկագոյն գտանէ։

Խառքս այս ոչ միայն ներդործեն մարմնոյն, այլ և մտայն իսկ. և բազում անգամ պատճառեն սաստիկ նուաղութիւն, և անհնարին այլանդակ խորհուրդս, լքումն ոգւոյ, վատասրտութիւն, երկիւղ, թախծութիւն մտաց և փոփոխութիւն բնութեան։

Պատճառք։

Ամենայն ինչ՝ որ պատճառէ ըղձութիւն կամ նուաղութի մարմնոյ, տայ գոյութիւն այսր ախտի. որպիսի են հեղգութիւն, անչափ վաղաշուութիւն, ըմպումն յաճախ թէյի, խահվէի, կամ այլ անզօր ջերմաջերմ ջրային հեղուկաց. ստէպ արիւն առնելն, կամ յաճախ գործածութիւն լուծողական և փսխական դեղոց։

Դարձեալ որ ինչ ինքնաբերաբար մարսողութեան, կամ արգելու զպատշաճ փոխարկութիւն կերակրոց ի սատմքսի, ունի զնոյն ներգործութիւն, որպիսի են ընդերկար պահեցողութիւն կերակրոց, անչափ ուտել և ըմպելն, կիրառութիւն քամոտ, անեփ և անառողջ կերակրոց, և անյարմար դրութիւն մարմնոյ։

Այս ախտք գրեթէ հասարակ են ի մէջ ուսումնական անձանց, յորոց սակաւք են որ ազատ գտանիցին յայսոցիկ ախտից. քանզի սաստիկ և խստաքննին մտածողութիւնն, յորում սովոր են նոքա լինել, ոչ միայն ճնշէ զոգիս նոցա, այլ և ոչ թոյլ տայ հետեւել պատշաճ կրթութեան, ուստի մարսողութիւնն նուազի, որ նուազ մարմնոյն տկարանայ, թանձրագոյն մասունք մարմնոյն լուծանին և բովանդակ զանգուած հիւթոյն ապականին, որով և պատճառին այսքիկ սարսափելի ախտք։

Դարձեալ որ ինչ նուազեցուցանէ զմարմին, ճնշէ զոգիս և զկենդանական զօրութի մարմնոյ, պատճառէ զայս ախտս, որպիսի են վատասոյզ օդ, պակասութիւն քնոյ, ծանր վասակ, անհեթեթ կարծիք, պէտպէս կասկածանք, անձկութիւն սրտի, տարակուսանք, տրտմութիւն, յուսահատութիւն, սրտնեղութիւն, և անընդհատ բարկութիւն կամ զայրացումն։

Նշան այսոցիկ հիւանդութեանց։

Մեք յիշեսցուք զայնոսիկ նշանս միայն, որք հասարակ են յայսոսիկ հիւանդութիւնս։

Այս անտանելի հիւանդութիւնք հասարակապէս սկսանին հոլմայնի փքքայմամբ կամ տարածմամբ ստամքսայ և փորոտեայ, որով և ախորժակ և մարսողութիւն հիւանդին անկանի

ընդ վատթար դրութեամբ, զի բազում անգամ կերակուրն թթուի 'ի սառամոքսին և հիւանդն վշտանայ փոխամբ, որ և երբեմն փսխէ լոկ ջուր, և երբեմն պղտամ կամ դորշագոյն հիւթ ինչ. բազմիցս եւս ըմբռնի 'ի լեկիչ ցաւս շուրջ զպորտիւն հանդերձ շառաչմամբ աղեաց։

Կարգ լուծման որովայնի նորա է անհամեմատ. զի երբեմն լինի լոյծ և երբեմն պինդ. յոմէ և պատճառի հողմ և անհանգստութիւն յոյժ։

Մէզ նորա լինի երբեմն սակաւ և երբեմն շատ, և այն միանգամայն դըտակ և պարզ։ Տարածի սաստիկ պընդութիւն 'ի վերայ կրծոց նորա, որով և դժուարանայ շնչառութիւնն, զգայ սաստիկ բաղխումն սրտի, և յանկարծակի սաստիկ ջերմութիւ 'ի զանազան մասունս մարմնոյ, և երբեմն եւս սաստիկ սառնութիւն ընդ բոլոր մարմինն. և բազում անգամ ըմբռնի 'ի ցաւ բազկաց, կամ անդամոց, թիկանց կամ որովայնի. զարկ բաղկացն հարկանի կարի անհամեմատ, զի երբեմն լինի անսովոր յամր և թոյլ, և երբեմն երագ և խիստ։ Միշտ յօրանջէ հիւանդն, ձգռտայ, հառաչէ, և զգայ հեղձուցն. նաև երբեմն լայ և երբեմն ծիծաղէ. քուն նորա է միշտ անհանգիստ, յորում և բազում անգամ խռովի զարհուրելի երազովք կամ երեւակայական ցնորիւք։

Ջերեւին և այսոցիկ գլխացաւ, կարկամութն, անընդհատ ցաւ 'ի զանազան մասունս մարմնոյ. հնչումն ականջաց, և անկարգութիւն բոլանդակ կենդանական գործողութեանց։ Ուստի և միտքն խռովի միշտ 'ի չնչին պատճառաց, և յուզի 'ի կարի թիւր արհաւրաց, որոց և յաջորդէ անհանգստութիւն, երկիւղ և սոսկումն, բարկութիւն, տարակոյս և սաստիկ թախծութիւն։

Յուղի անդադար նա յերեւակայական 'ի շար և 'ի դժնդակ սարսռելի խորհուրդս, որով և խանգարի յիշողականութիւնն. սխալի խպատ 'ի դատողութիւնս իւր. կորուսանէ միանգամայն զընտրողութիւն մտացն. զցայգ և զցերեկ տարուբերի 'ի շարունակ զարհուրանս չար ոգւոց և մահու։

Ամ, զնաւրդ ցաւալի է ապերջանիկ կացութիւն այսպիսի հիւանդի. զի բիւր երանի տայ անձին, եթէ ծնեալ էր հրէշ կամ ճիւաղ՝ քան թէ մարդ բանական։

Օգուտ-Բիւն։

Որ վշտանայ ջղային տկարութեք, չէ պարտ ընդերկար մնալ անտուաղ. Կերակուր նորա պարտ է լինիլ զօրաւոր և սննդաւոր, բայց դիւրամարս։ Պարարտ միս և համեմունք ճեմասակար են յոյժ։ Պարտ է զգուշանալ յանչափութենէ, չուտել ինչ նախ քան զքաղցնուլն. և մի զայնպիսի ինչ՝ զոր գիտէ եթէ չկարէ մարսել։

Նաեւ 'ի բաց կացցէ 'ի ծանր ընթրեաց. և յորժամ զգայ զնուաղութիւն կամ զընդարմացումն, միայն կոտորակ մի հայիւ և բաժակ մի գինւով լիասցի։ Այլ զգուշասցի յառաւելութենէ ըմպելեաց. զի որքան չափաւորն զօրացուցանէ զստամոքսն և օգնէ մարսողութեանն, այնքան առաւելն քան զչափն թուլացուցանէ զմարմինն և անպիտան առնէ զկարողութիւն մտացն. բայց եթէ հիւանդն զգայ թթուիլ գինւոյն 'ի ստամոքսի, բարւոք է փոխարէն այնորիկ առնուլ սակաւ ինչ Բրանդ ջրախառն։

Նաեւ զգուշանալ պարտ է յամենայն կերակրոց, որք են քամաս, կաղ-

digitised by A.R.A.R.@

ծրը և դժուարամարս. եւս և յամենայն անզգոյ, թոյլ և ջերմաջերմ ըմպելեաց, որպիսի են թէյ, զահվէ, օշարակ լիմոնի, քացախոյ, թամրհնդոյ, ֆոնլ, և այլն։ Օգուշալի է յատկապէս 'ի զորաւոր եւ ոգելից ըմպելեաց, որք թ. եւ առժամանակ մի դիւրին զհիւանդն, սակայն յոյժ առաւելուն զսկարութիւնն, զի նը. աւադն զմարմինն, ինասն մարդութեան, և բազում անգամ պատճառեն զմահաւիթ հեռեւանս։

Յայս անտանելի հիւանդութիւնս կրթութիւնն է գերազանց միջոց բժշկութեան քան զամենայն դեղ և զճար. և այն հեռիսան. երիվարաւ կամ կառաք, զոր և համարիցի հիւանդն առաւել օգտակար, այն օգնէ ինքեան. բայց առաւել օգտաւէտ է ոտիւք կամ երիվարաւ, որով շարժին ամենայն անդամքն առանց կարի վատակելոյ։

Լրկար ճանապարհորդութիւն ծովու կամ ցամաքի է նոյնպէս օգտաւէտ այն հիւանդութեանց. զի փոփոխութիւն տեղեաց, պէսպէս տեսարանք բնութեան և զանազան նոր առարկայք՝ որք գրաւեն զմիտս հիւանդին, են բարեբաստիկ միջոց 'ի բժշկել կամ 'ի դիւրել զայսոսիկ ախտս։

Ոչ սակաւ օգտէ ցուրտ, շոր և բարեխառն օդն, զի սնդէ ըզջիղան և կարողացուցանէ զանդամն. իսկ ընդհակառակն թուլացուցանէ և անկարող առնէ ջերմ և անբարեխառն օդն. բայց եթէ ստամոքս և աղիք հիւանդին նուազ են, պարտ է զգուշանալ 'ի ցրտոյ, յատկապէս 'ի ձմերան և յանձրեւային եղանակի. վասն որոյ բարւոք է նմա 'ի սոյն եղանակս զգեստուլ ֆլանէլս, որ յորդէ զարտաշնչութիւն և պահպանէ զանձն ընդդէմ յանկարծ փոփոխութեան ջերմ եղանակի 'ի ցուրտն։

Շփել զմարմին հիւանդին նուրբ վրձինաւ կամ հատ կտաւով կարի օգուտ է վասն շրջանի արեան և արտաշնչութեան մարմնոյ։

Նոսա պարտ է վաղ յառնել հիւանդին 'ի քնոյ. առնել զկանոնաւոր կրթութիւնս նախ քան զբաղմելն 'ի ճաշ. և պահել անձն միշտ հանգիստ, խաղաղ և ուրախ. քանզի ոչինչ այնչափ ինասէ այսոյ հիւանդութեանց և նուազել զմարսողական զօրութիւն ըստամքին, որչափ երկիւղն, տրտմութիւնն և թախծութիւնն մտաց։

Դեղ։

Թէ և զայս անտանելի ախտս անհնարին է գեղոբ!իւք բժշկել, բայց և ոչ զանց արասցուք վասն զանազան պատճառաց կարգել ասա զքանի մի թեթեւ դեղս, զորս հիւանդն կարէ ազատօրէն 'ի կիր առնուլ 'ի զանազան պատահմունս առ 'ի դիւրութիւն. այսինքն յամրութեան որովայնի, 'ի նուազութեան մարմնոյ և ստամոքսին, յանմարսութեան և 'ի փքախտութեան։

Յամրութեան որովայնին կարէ հիւանդն առնուլ զբոբրբ (բաղնիք), կոպարայլ, սենա մանա (սենա մեքի), և այլ մեղմ լուծողական դեղս։

Ի նուազութեան մարմնոյ պարտ է հիւանդին յամենայն առաւօտու լուանիլ ցուրտ ջրով, հեղլով զայն 'ի վերայ գլխոյն։

Ի նուազութեան ստամոքսաց հարկ է նմա առնուլ յամենայն առաւօտու ժամաւ միով յառաջ նախ քան զճաշելն, զհեղուկ փերոան բարի կամ ըստամքային դառն դեղոբոյս։ Լրա 'ի թթուաձութեան ստամոքսաց՝ ըզմագնեսիա (մանիզիա)։

Ի յանմարսութեան և փքախտու-

digitised by A.R.A.R.@

թեան պարտ է նմա առնուլ ոգի արքասպի պէրէր օֆ վէրէլ. յաւուրն երկիցս կամ երիցս անգամ, և առ անգամն 20 կամ 30 շիթ մի բաժակաւ միով ջրոյ։ Այլ վասն այլոց ամենայնի շիք դեղ և դարման, մեծ բայց միայն զգուշութեամբ պարտ է մխտ դնել կերակրոց և ըմպելեաց, օդոյն և կլիմայի, զբօսանաց և անդորրութեան յիշատակեալ ի վերոյ, և յատկապէս ողջախոհութեան. ապա թէ ոչ՝ չէ հնար ազատիլ յայսոցիկ դառն և յանտանելի ախտից, որ ընկեր են մարդոյ անդուլ տանջանաց մինչեւ ի ջանել նորա ի գերեզման։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ջրգողութիւն.

Ջրգողութիւնն է անբնական այտուն բոլոր մարմնոյ, կամ միոյ իրիք անդամոց, պատճառեալ ի ժողովմանէ ջրային հիւթոց. որ և բաժանի ի զանազան անուանս ըստ ջրգողեալ մասանց մարմնոյ, այսինքն յԱնասարկա, որ է ժողով ջուրց ընդ բովանդակ մարմնոյն. յԱսկիտ, որ է ժողով ջուրց յորովայնի. ի Հիդրոպս կամ ի Պիկիտրիս, որ է ջրգողութիւն կրծոց. և ի Հիդրոսիֆալոս, որ է ջրգողութիւն ուղեղան կամ սկաւառակի գլխոյ։ Այս ամենայն տեսակք որ և է, վտանգաւոր են և գրեթէ մահացու։

Պատճառք.

Բազում անգամ ջրգողութիւնն է ժառանգական, որ ի ծնողաց ինքնէ առ սերունդս իւրեանց։

Այսեւ հնար է այնմ յառաջ գալ ի հրատապ կամ յայլ զօրաւոր ըմպելեաց. որոյ վասն ասի յառակս թէ, անչափ ըմպողք զո և իցէ ի զօրաւոր ըմպելեաց, ջրգողութեամբ մեռանին։

Այս ախտ գրեթէ հասարակ է և ի մէջ այնոցիկ որք նստողական կեանս վարեն, և յայնոսիկ՝ որք ստէպ արիւն առնեն և հետեւին միշտ լուծողական դեղոց։

Այսեւ բազում անգամ պատճառի այն ի յանկարծական արգելման է սովորական կամ հարկաւոր արտաթորման, որպիսի են դաշտան, թուքք, և բնական լուծումն որովայնի։

Այս և պատճառի այն յրմպելոյ յաճախ ցուրտ, անզօր և ջրային հեղուկս, յորժամ մարմինն է դեռ կարի ջերմ ի խստատիկ կրթութենէ իմեքէ, այսինքն յընդերկար քայլելոյ, ի հեծանելոյ ձի, ի վազելոյ, ի պարելոյ, և այլն։

Բազում անգամ եւս պատճառի այն ի խոնաւ և ի շրգելից բնակութենէ, ուստի և գրեթէ հասարակ է այս հիւանդութիւն ի բնակիչս խոնաւուտ, հարթ և ճահճային տեղեաց։

Այնպէս և հնար է այնմ պատճառիլ յուճախ ի կիրառութենէ ջրային, և անզօր կամ դժուարամարս կերակրոց, ի ներքոգործութենէ այլոց հիւանդութեանց, որպիսի են դալուկն, խոշլ լերդի, թմանչք, թոքացաւութիւն, և այլն։

Այսեւ յարգելմանէ արտաշնչութեան մարմնոյ և կանոնաւոր շրջանի արեան պատճառի այս ախտ։

(Շարունակութիւն)

digitised by A.R.A.R.@

ԿՐԹԱՐԱՆ
ԱՐԵՏՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԽՕՍՔ ԱՌԱՋԻՆ

(Շարունակութիւն, տես թիւ 3.)

Աստուծոյ ողորմածութիւնը, թէ՛ հանդերձեալ կենաց և թէ՛ այս աշխարհիս մէջ հրատարակած է մեզ համար արդարութիւն և ազատութիւն Նի մեղաց, բայց ինչ օգուտ, երբ մենք մեր կողմէն փոփոխուած չենք, երբ մեր յարաբերութիւններն Աստուծոյ հետ կատարելագործուած չեն, երբ մեր գատաւորն տակաւին մեր հայրն չէ եղած։ Ի՞նչ երջանկութիւն է այն երջանկութիւնը, որոյ աթոռը սրտի մէջ չէ։ Իւրաքանչիւր ոք, նաև թեթեւամիտներն անգամ, ըզգացում մի ունին և գիտեն, որ ճշմարիտ երջանկութիւնը միայն սրտի մէջ կարող է լինիլ։ Իւրաքանչիւր ոք, նախատեսելով, որ կենաց ինչ ինչ վայրկեաններուն մէջ երջանկութեան կենդանի զգացումն կարող է հանդիպիլ մարմնաւոր ցաւոց և դառն վշտաց, նախատեսելով, որ թշուառութեան կենդանի զգացումն կարող է յայտնել ոչնչացնել բովանդակ երջանկութեան տարերքն ու հիմունքն, իւրաքանչիւր ոք սոյնօրինակ վայրկեաններուն մէջ ունեցած է միշտ նախազգացումն կամ նախատեսութիւն բարոյական երջանկութեան—երկնային երջանկութեան, և նախազգացումն բարոյական թշուառութեան—թշուառութեան դըժոխոց. աւելի պարզ ասենք, իւրաքանչիւր ոք զգացած է երկինք և դըժոխք։

Արդ՝ մեր սիրտն լինելով մեր ճշմարիտ երջանկութեան և թշուառութեան կեդրոնն, փրկութիւնն ևս կարող է սկսիլ երկրիս վրայ, ինչպէս որ դատապարտութիւնն իրօք սկսուած է։ Իւ եթէ մենք սոյն կենաց մէջ Աստուծոյ որդիք ենք, սոյն կեանքէն իսկ պէտք է ճանաչենք և խոստովանինք մեր փրկութեան առհաւատչեանքն մեր որդեգրութեան իրաւանց և արտօնութեանց մէջ։ Իւ եթէ չենք գտներ մենք նոյն գրաւականներն, եթէ չենք ճաշակեր մեր բարոյական երջանկութեան նախախայրիքն, եթէ մեր յարաբերութիւններն մեր երկնաւոր Հօր հետ որդիական չեն, եթէ բովանդակ շնորհուն, այսպէս ասենք, կը կայանայ միայն մերկ և անուանական փրկութեան սեպհականութեան մէջ, դատարկ և անգոյ փրկութեան մէջ, այնպիսի փրկութեան, որ երջանկութիւն չըպարունակէր իւր մէջ, այնպիսի փրկութեան, զոր մենք չենք զգար, այնպիսի շնորհուն, թող ներուի մեզ ասել, խաչաւ երեւակայական է, մենք փրկուած չենք, Աստուած մեր հայրն չէ, և ոչ մենք՝ նորա որդիքն։

Դաւիթ, երբ տիրասէր ծառայի աղաչանաց համար թողութիւն շնորհեց Աբիսողոմին։ թոյլ տուաւ նա սոյն զղջացեալ որդւոյն Իրուսաղէմ գալ, բայց մերժեց իւր երեսն տեսնելու։ Աբիսողոմ միթէ շնորհք համարեց սոյն թողութիւնն։ Ոչ երբէք, այլ աղաղակեց վշտահար սրտիւ. «Ինչ դէր եկի՞ի Կեսուրայ, լաւ էր ինձ տակաւին անդ լինելոյ». Բ. Թագ. ԺԴ. 32. Ի՞նչ էր այս դառնագին աղաղակին պատճառն, եթէ ոչ, որ Իրուսաղէմն չէր Իրուսաղէմ նորա համար, վասն զի կողոպտուած էր այն առարկայէն, որուն համար կը սիրէր նա սոյն քաղաքն։ Նորա սրտի խնդրածն սիրտ մ՚էր, և ոչ թէ վայրեր կամ պարիսպներ։ Հայրական բաղդեներն էին նորա

ճշմարիտ հայրենիքն, և քանի որ հեռի էր իւր հօր տեսութիւնէն, սուրբ քաղաքի երկինքն՝ օտար երկինք էր նորա համար. իսկ իւր ծննդեան երկիրն՝ տխուր վայր աքսորանաց։

Այսպէս կը լինի Աստուծոյ որդւոյ պատկերն, երբ հայրական կենդանացուցիչ ներկայութիւնն և դգուանքներն կը պակսին նորա համար։ Ի զուր կ'որոնէ նա խոստացեալ փրկութիւնն. վասն զի նորա անուն և լոկ նշանակներն միայն կը տեսնէ ամէն տեղ, իսկ իրականութիւնն՝ ոչ ուրեք։ Չէ երբ իւր հայրական ժառանգութեան կալուածքն կը վերադառնայ, հեռանալով աշխարհի կախարդանքներէն, որով գէթ իւր անբուժելի տրտմութիւնն կ'ամոքուէր, Աքիսողոմի աղաղակն կը լինի միայն իւր վերադարձի պատուէն. «Ինդէր եկի ի Յեսուրայ. լաւ էր ինձ տակաւին անդ լինել»։

Խարեբաղդաբար, այս չը կայ և կարող չէ լինել։ Աստուծոյ գործը կատարեալ է։ Նորա շնորհքն փրկութիւն կ'աւետէ, և մանաւանդ թէ փրկութիւնը մարդոյ սրտի մէջ կը դնէ։ Նա կը դնէ փրկութիւնը սրտի մէջ, դնելով ընդ նմին իւր սէրն, որ փրկութիւնն մի այլ անուն է, ճշմարիտ անուն։ Աստուծոյ գործն Աւետարանի մէջ հիմնուած է գերագոյն չափով և հաշուով։ Աստուած այնպէս անօրինած է, որ մարդոյ սրտի մէջ ուրախութիւն ծնուցանող բաշխումն կամ շնորհումն նմանապէս ծնուցանէ և սէր։ Սիրոն բռնաբարուած է աստուածային բռնաբարութեամբ, վասն զի սիրոն միայն բռնութեամբ կը գրաւի։ Մարդն խախտեց խզեց իւր յարաբերութեան կապերն Աստուծոյ հետ։ Աստուած եւս ի փոխարէն խզեց իւր յարաբերութիւնն մարդոյ հետ։ Մարդն Աստուած եղաւ. Աստուած մարդ եղաւ։ Մարդն ամէն բան մերժեց Աստուծոյ տալու. Աստուած զինքն մարդոյն տուաւ յանձն Յիսուսի Քրիստոսի։ Գողգոթայի վրայ բարձրացած խաչն հաշտութեան գրաւականաւ ցոյց տուաւ մարդկութեան՝ աքանչելիք անհուն մարդասիրութեան։ Սուրբն և Արդարն, արժանի առարկայն սիրոյ Յաւիտենականին, ընդունելով կեանք և մահ բոլոր օրինակի մարդկան, կեանք խաստագոյն և մահ դառնագոյն, ընդունելով ամենայն ինչ բաց ի մեղաց, ընդունելով իւր անձին մէջ ամենայն վիշտք մարդկութեան, վիշտք ներքին և անպատում, զոր աշխարհ ոչ ծանեաւ երբէք, ահա այսպէս Որդին Աստուծոյ ցոյց տուաւ այնպիսի սէր, որուն մարդն երբէք չէր ակնկալեր. ցոյց տուաւ այնպիսի սէր, որ պէտք է կամ մանրէր մաշէր մարդոյ հպարտութեան կարծրութիւնը և կամ՝ ան, բուժելի հրատարակէր զայն։ Ահա սոյն նշանով պիտի ուրիշներէն որոշուին և իրարու հետ միանան ընտրեալներն։ Ահա սոյն վերածնելութեամբ պիտի կազմուի երկրի վրայ Աստուծոյ Վերդաստանն։ Արդ սոյն վերածնելութիւնն ինչ սրտի մէջ որ կատարուի, անշուշտ կ'արտադրէ և սէր մեգամայն։ Եթէ սոյն վերածնելութիւնն ծնունդն չը մեռնի սրտի մէջ, իբրեւ սերմն 'ի վերայ փոշոյ և առազոյ, կը լինի նոր կենաց բեղմնաւոր և անընդհատ գործունի սկզբունք։ Երախտագիտութիւնն խառն ընդ ուրախութեան կ'արծարծեն կը զարթուցանեն հոգւոյ բովանդակ զօրութիւնը։ Պարտաւորութիւնն կ'անհետի, ամենեքեան կը ժրանան և կը գործեն։ Աստուծոյ որդին, իբրեւ ծաղիկ գարնանային, կը բողբոջի և կը բացուի. նորա բնաւորութիւնն ու ընդունա-

digitised by A.R.A.R.@

կութիւնքն կը յայտնուին, լեռվին կը փայլին և կը տեսնուին այն ամէն բարոյական տարերքներն, որով ինքն կազմուած է. արտաքին իրողութիւնն ներքին յատկութիւն կը դառնայ. ինչ որ Աշմարիտ է Յ՚Աստուած, Աշմարիտ կը լինի և ի մարդն։ Այս ինչպէս առաջին արարչագործութիւն փառաւոր օրերուն մէջ, նոյնպէս և այսօր իսկ Յ՚Աստուծոյ որդին իւր զգացումներով, իւր բարոյական վիճակով, իւր գործքով և ընթացքով կ՚որոշուի իւր յատուկ գիծերով, իւր գեղեցիկ նկարագրով՝ իւր աստուածանման պատկերով։ Յ՚Նուիրեալ փրկութիւնն ոչ թէ միայն լոկ քարոզուած կը լինի հաւատացեալց, այլ և իրագործուած, այլ և զգալի ի մէջ նոցա։ Ոչ թէ գրաւոր խօսքն միայն, այլ և «Հոգին Յ՚Աստուծոյ կը վկայէ նոցա հոգւոյն, զի են որդիք Յ՚Աստուծոյ»։

Վասն զի Յ՚Աստուծոյ Աշմարիտ որդիքն, այն հայրական բազկաց վրայ, ուր կը գգուին, այն հայրական սրտին վրայ, ուր ներուած է իրենց՝ հանգչիլ, կ՚ոգեւորին կը ջերմանան, աստուածային վառարանի կենսանորոգ ջերմութեամբ։ Յ՚Նորոգ կեանքն, որ երբէք չը խառնուիր ուրիշ կենաց հետ, կուտայ նոցա անյաղթելի զօրութիւն, անկուն խիզձ, անապատ ճանաչողութիւն և գիտութիւն՝ լինիլ միշտ ի Աշմարտութեան։ Այսպա կղգան, որ կանոնաւորութեան մէջ են, կղգան, որ հասած են իրենց սկզբնական նպատակին, կղգան, որ միացած են իրենց հօր հետ։ Իւրաքանչիւր օր Յ՚Աստուծոյ հայրական ձեռքէն ընդունած նորանոր պարգեւներն կը դրոշմեն նոցա վրայ նորա հայրութիւնն և կը նորոգեն նոցա որդեգրութեան կնիքն։ Յ՚Յուսահետեւ կը կատարուի բանն Յ՚Աստուծոյ թէ. «Ոչ ոք յափշտակիցէ զձեզ ի ձեռաց իմոց»։ Խորին արձագանգ մի Յ՚Աստուծոյ որդւոյ սրտի խորքէն կը պատասխանէ սոյն երջանկաւէտ ձայնին։ Այսպա կը սիրեն զՅ՚Աստուած, կը սիրեն զնզարս, և մի թէ բաւական չէ՞ այս։ Ոչ ապաքէն սէրն կեանք է։ Ոչ ապաքէն սէրն անմահ է։ Այս ահա սոյն սիրոյ մէն մի գործն, մէն մի զգացումն կ՚առաւելու և կը բազմապատկէ նոյն սէրն, ինչպէս կը պակասցնէ կը սպառէ ինքնասիրութիւնն և անմաքուր յաժարութիւնները. մէն մի գործ մէն մի զգացողութիւն կ՚աճեցնէ կը զօրացնէ երկնաւոր հօր հետ ունեցած միութեան զգացումն, ոչ թէ իբրեւ արժանաւորութիւն, որով զՀայր առնիքեանս կը գրաւեն, այլ իբրեւ թոռիչ, իբրեւ խանդ, որով ինքեանք առՀայր կը մերձենան։

Այս ինչ բան որ Յ՚Աստուծոյ որդիքն Յ՚Աստուծոյ հետ կը միացնէ, նոյն բանն նոյն չափով աշխարհէն կը բաժնէ։ Անքա աշխարհի մէջ կը լինին, բաց յաշխարհէ չեն։ Յարգասիրութեամբ խառն են մարդկանց հետ, իսկ մարդասիրութեան սկզբունքով, այսինքն հաւատով և յաստուծ օտարականներ են մարդ կութեան մէջ։ Անքա կը ճանաչեն զաշխարհ, նոքա աւելի խոր կը թափանցեն քան թէ այլք աշխարհը ճանաչելու։ Անքա աւելի լաւ կը ճանաչեն զաշխարհ, քան թէ աշխարհն՝ զինքն. վասն զի կ՚ասէ առաքեալն. «Հոգեւոր մարդն քննէ զամենայն» և ըստ նոյն առաքելոյն «Հոգեւոր մարդն ոչ քննի յումեքէ»։ Այս արդարեւ «Աշխարհ ոչ ճանաչէ զնոսա» ասէ առաքեալն Յովհաննէս։ Այսինքն աշխարհն ըմբռնելով Յ՚Աստուծոյ որդւոյ նոր կեանքն, չը կարողանալով նոցա վարուց ուղղիչ և սահմանիչ սկզբունքն չափել և

digitised by A.R.A.R.@

քննել, չընդունիր զնոսա իբրեւ զիւրսն, և ինքն աւելի կը հեռանայ ի նոցանէ, քան թէ նոքա իրմէն։

Այս յիմարութիւնն ըստ Աւետարանի, այս խառնակութիւնն լեզուաց, որ ծնուած է, ոչ թէ մի երկրորդ Բաբելոնի շուրջ, այլ առ պատուանդանաւ աստուածային մարդասիրութեան արիւնաներկ Կոթողին. այս Խաչի ճառն, Քրիստոնէութեան ծոցին մէջ, առարկայ դարձած է տեւական գայթակղութեան, կորուսելոց համար յիմարութիւն, փրկելոց համար իմաստութիւն և զօրութիւն։ Որոշ վերանորոգութիւնն կամ վերածնելութիւնն, որ յատուկ է որդւոց Աստուծոյ, երկու ցեղ կը բաժնէ ըղմարդկութիւնն, յորոց մին չը հասկանար միւսին լեզուն։

Երկու զուգահեռական, բայց խոտորիմաստ, գծերու վրայ կընթանան երկու ցեղն և երկու մարդկութիւնն եւս, առանց իրար հպելու, առանց իրարու հետ միանալու։ Ի՞նչ պատահած է արդեօք մի և նոյն գերդաստանի սոյն երկու ճիւղերուն մէջ։ Մարդկային յայտնի յատկութիւններն կամ բնաւորութիւններն բարձուած են արդեօք մի ճիւղի վրայէն։ Եւ կամ նոր և առանձին յատկութիւն յաւելցած է արդեօք միւսին վրայ։ Երկու կողմէն եւս տղաղակներ, հառաչանքներ և նշանաբաններ կը լսուին։ Իսկզբան գոգցես մի և նոյն ասացուածներն են և մի և նոյն լեզուն։ Երկու եղերքէն եւս կը խօսին պարտուց վրայ, սիրոյ վրայ, յուսոյ վրայ և Աստուծոյ վրայ իսկ։ Սակայն խօսքն և ասացուածներն մի են, բայց գաղափարներն տարբեր։ Եւ կը տեսնուի յայտնապէս, որ սոյն երկու ցեղին մէջ, խնդիրն ոչ մի և նոյն պարտուց վրայ է, ոչ մի և նոյն սիրոյ, ոչ մի և նոյն յուսոյ, և ոչ մանաւանդ մի և նոյն Աստուծոյ։ Վերստին կը կրկնեմ, որ երկու մարդկութիւն կայ։ Պէտք է ուրեմն որ երկու սկիզբն լինի և երկու ծնունդ, և արդարեւ այս երկուքն եւս կան. «Օ՛ի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ի հոգւոյն՝ հոգի է։ Արդ՝ հոգին կարող է ճանաչել զմարմին, բայց մարմին ոչ կարէ ճանաչել երբէք զհոգին։

(Շարունակութիւն)

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դանիցս անգամ հրատարակած եմք Ամսագրոյս միջոցաւ, որ Ս. Աթոռոյս Վարժարանի Տեսչութիւնն կարող չէ երբէք ամէն մանուկներ ընդունիլ, որոնք զանազան քաղաքներէ կը զրկուին առանց կանխապէս ծանօթութիւն տալու և առանց օրինաւորութեան։ Սակայն մեր սիրելի Ազգակից քն առանց ուշադրութեան առնելոյ մեր Ազդարարութիւնն, կը շարունակեն մանուկներ զրկել անընդհատ, ոմանց որբութիւնն աւելի բռնելով, ոմանց աղքատութիւնն, ոմանց անտերնչութիւնն և այլն և այլն, որով և Ս. Աթոռս կրստիպուի ծախք վճարելով հանդերձ յետս դարձնել, վասն զի Վարժարանն ոչ որբանոց է, ոչ աղքատանոց և ոչ անառակաց պատժարան, այլ կը վարուի իւր յատուկ կանոնաց համեմատ և երբէք կարող չէ իւր աշակերտաց սահմանեալ քանակութենէն և օրինաւորութեան ու ձեռնհասութեան շրջանէն արտաքոյ մանուկներ ընդունելով խոտորիլ իւր նպատակէն և անբարեկարգութեան անդունդն գլորիլ։

digitised by A.R.A.R.@

Ուստի այս անգամ մեր Ազգարարութիւնն կրկնելով յատկապէս կը խնդրեմք մեր Ազգային լրագրապետներէն նոյնն հրատարակել իւրեանց թերթերուն մէջ ի պատիւ Ս. Թադէոսի և ի զգուշութիւն համբէն Ազգայնոյ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս տարի տէրունական Ս. Տեղեաց տօնախմբութիւններն և Օտարական հանդէսներն խիստ օրինաւորութեամբ և խաղաղութեամբ կատարուեցան և տեղւոյս Վսեմ. Կուսակալն յատկապէս շնորհակալութիւն մատոյց Ս. Աթոռոյս Ամենապատիւ Պատրիարքին հայադգի ուխտաւորաց համար, յայտնելով, որ նոքա ոչ միայն ինքնին կանոնաւոր շարժեցան տօնախմբութեանց ժամանակ, այլ նաեւ ընդհանուր խաղաղութիւն պահպանելու համար օժանդակեցին Տէրութեան պաշտօնէից՝ իւրեանց բարեսէր վարմունքով։

—Պրուսիացիք կը շարունակեն փորել Յովհաննու Ասպետութեան կարգին վերաբերեալ աւերակին փլատակներն, զոր Պրուսիոյ Թագաժառանգ Ֆրիտան իւր այցելութեան ժամանակ Յերուսաղէմ ընդունեց Օսմանեան Տէրութենէն՝ եկեղեցի, հիւանդանոց և դպրոց կառուցանելու համար։ Այս անգամ խիստ զարմանալի հնութիւններ ելան փլատակներէն, մանաւանդ շատ հին սակի դրամներ, զորս Մեծ. Հիւպատոսն փութացաւ իւր Տէրութեան կայսերական Թանգարանն ղրկելը

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ի
Մ. Վրդապետէ Մուրատեանց
Յաստէլեան ուխտէ Արքոյ Յովհէաննու։

Տպագրուած է այդեամբք բարեպաշտ Անհոտեսի Կիրակոսի Քարուկեանց Ինկեանցւոյ, յօգուտ և ի պայծառութիւն Յառանգաւորաց Վարժարանի Ս. Աթոռոյս, վայելուչ ձեւով, մաքուր թղթի վրայ և 640 երեսէ բաղկացեալ։ Կը պարունակէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Պատմութիւնն, իւր սկզբնաւորութենէն մինչեւ 1867 թուականն, որոյ արժանեաց և կարեւորութեան գնահատութիւնն բանիբուն ընթերցասիրաց առաջաւոր դատաստանին կը թողումք։

Գին 16 դահեկան։

ԱԳՆԷՍ

ՎԷ ԵԱ
ՆԷՑ ԶԱՎԱՆ ԳՐՉՃԻՒՂԱՉ

Լրմենիճէպէն Ռէրճիմէ էյլէյիպ Եաղը
Յանիապէ Յ. Ս. Ռիւրճիանօֆֆ։

Գին 4 դահեկան։

ԳԱԳԻԿ

ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ
Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Գրեաց
Ս. Կարապետ Տէր Մինասեան, ի Ս. ուխտէ Արքոյ Յովհէաննու։

Գին 5 դահեկան։

digitised by A.R.A.R.@

ՑԱՆԿ

ԸՊԲԻԼ

Թուղթ Ա. Պատրիարքին առ Վիկտորիա Թագուհին Անգլիոյ . 73
Դպրոցական հանգէսք և Ճառք . 76
Կարգադրութիւն ռուղջութեան . 85
Կրթարան ուսեցարանական բանից . 92
Աջդարարութիւն . 95
Յամառնակագրականք . 96
Նոր հրատարակութիւնք . ”

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆՔ

Ա. Սիծը ամեն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մեկուկէս ուրմատալ թղթով ։

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ ։ հանգէսքն ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի ։

Գ. Զատ տեսակ առնել ուզողը ։ պէտք է ամեն մեկ տեսքին չորս դահեկան վճարէ ։

digitised by A.R.A.R.@